

Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2020 թվականի  
դեկտեմբերի 10-ի N 2044 - Ն որոշման

**ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՆԱԳԱՆՁՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ  
ԸՆԹԱՑՔՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

1. Սույն կարգը սահմանում է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված կարգով նախաձեռնված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ընթացքում ներկայացվող հայտարարագրի (այսուհետ՝ հայտարարագիր) լրացման կանոնները:

2. Հայտարարագիրը լրացվում է հայտարարագիր ներկայացնող (այսուհետ՝ հայտարարատու) անձի կողմից և պարունակում է իր և իր ընտանիքի անդամներին առնչվող տեղեկություններ՝ ըստ հայտարարագրում նախատեսված բաժինների:

3. Հայտարարագրի բոլոր դաշտերը ենթակա են պարտադիր լրացման՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առանձին դաշտը վերաբերելի չէ:

4. Յուրաքանչյուր տվյալ լրացվում է այդ տվյալին վերաբերելի դաշտում, իսկ հավելյալ տեղեկատվության առկայության պարագայում այն ներառվում է հայտարարագրի յուրաքանչյուր բաժնի վերջում առկա «Լրացուցիչ տեղեկություններ» աղյուսակում:

5. «Ա» բաժինը լրացվում է՝ հիմք ընդունելով հայտարարագրի ներկայացման օրվա դրությամբ արդիական տեղեկատվությունը:

6. «Ա.1» ենթաբաժինը լրացվում է մեկ անգամ, «Ա.2» ենթաբաժինը լրացվում է հայտարարատու անձի ընտանիքի անդամների քանակով՝ նշում կատարելով հայտարարատու անձի հետ կապի տեսակի մասին: «Ա.3» ենթաբաժինը լրացվում է հայտարարատու անձի և նրա ընտանիքի

անդամներին Հայաստանի Հանրապետության տարածքում և դրանից դուրս պատկանող բանկային հաշիվների քանակով:

7. «Բ» բաժնի աղյուսակները լրացվում են հայտարարագրի ներկայացման օրվա և ուսումնասիրվող ժամանակահատվածի սկզբի դրությամբ սեփականության իրավունքով անձին պատկանող գույքի բոլոր միավորների համար: Բաժնի սկզբում կատարվում է նշում այն օրվա վերաբերյալ, որի դրությամբ լրացվում են աղյուսակի տվյալները: Անձին սեփականության իրավունքով պատկանող գույքի վերաբերյալ տվյալները լրացվում են «Հանրային ծառայության մասին» օրենքի 40-րդ հոդվածի կանոններով, եթե այլ բան նախատեսված չէ սույն կարգով կամ չի բխում հայտարարագրի ձևից: «Բ» բաժնի աղյուսակներում որպես գույքը ձեռք բերելու եղանակ նշվում է այն գործարքի տեսակը, որի հիման վրա անձը ձեռք է բերել աղյուսակում լրացված գույքը:

8. «Բ.1» ենթաբաժինը լրացվում է հայտարարատու անձին և նրա ընտանիքի անդամներին հայտարարագրի ներկայացման պահին պատկանող անշարժ գույքի միավորների քանակով:

9. «Բ.2» ենթաբաժինը լրացվում է հայտարարատու անձին և նրա ընտանիքի անդամներին հայտարարագրի ներկայացման պահին պատկանող տրանսպորտի միջոցների միավորների քանակով:

10. «Բ.3» ենթաբաժնում «Բ.3.1» աղյուսակը լրացվում է հայտարարատու անձին և նրա ընտանիքի անդամներին հայտարարագրի ներկայացման պահին պատկանող բաժնային արժեթղթերի, ինչպես նաև այլ ներդրումների (բաժնեմաս, փայաբաժին) համար, իսկ «Բ.3.2» աղյուսակը՝ հայտարարատու անձին և նրա ընտանիքի անդամներին հայտարարագրի ներկայացման պահին պատկանող պարտքային և արժեթղթերի համար: «Բ.3.1» և «Բ.3.2» աղյուսակները լրացվում են՝ ըստ յուրաքանչյուր թողարկողի (կազմակերպության) և արժեթղթի (ներդրման) տեսակի:

11. «Բ.4» ենթաբաժնում «Բ.4.1» և «Բ.4.2» աղյուսակները լրացվում են հայտարարատու անձի և նրա ընտանիքի անդամների կողմից հայտարարագրի ներկայացման օրվա դրությամբ հանձնված համապատասխանաբար փոխառությունների և ավանդների քանակով:

12. «Բ.5» ենթաբաժինը լրացվում է հայտարարատու անձին և նրա ընտանիքի անդամներին հայտարարագրի ներկայացման պահին պատկանող չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող գույքի միավորների քանակով:

13. «Բ.6» ենթաբաժինը լրացվում է հայտարարատու անձին և նրա ընտանիքի անդամներին հայտարարագրի ներկայացման պահին պատկանող դրամական միջոցների բոլոր տեսակների քանակով՝ նշելով, թե դրամական միջոցի որ տեսակի համար է լրացվում աղյուսակը:

14. «Գ» բաժնում «Գ.1» ենթաբաժինը լրացվում է հայտարարագրի ներկայացման պահին հայտարարատու անձի և նրա ընտանիքի անդամների պարտավորությունների համար՝ ըստ պարտատերերի և պարտավորության հիմքերի: Լրացման ենթակա չէ այն պարտավորությունը կամ դրանց հանրագումարը, որը չի գերազանցում 200 000 դրամը: Որպես պարտավորության ծագման իրավական հիմք նշվում է այն գործարքի տեսակը, որի հիման վրա ծագել է պարտավորությունը:

15. «Դ» բաժնում «Դ.1» ենթաբաժինը լրացվում է ուսումնասիրվող ժամանակահատվածում հայտարարատու անձի և նրա ընտանիքի անդամների կողմից ստացված բոլոր եկամուտների համար՝ ըստ եկամտի տեսակի և եկամուտը տրամադրող անձանց: Ստացված եկամուտների վերաբերյալ տվյալները լրացվում են «Հանրային ծառայության մասին» օրենքի 41-րդ հոդվածի կանոններով, եթե այլ բան նախատեսված չէ սույն կարգով կամ չի բխում հայտարարագրի ձևից:

Սույն ենթաբաժնի լրացման նպատակով անձի եկամուտների մեջ չի ներառվում «Ե» բաժնում արտացոլված գործարքների կնքման արդյունքում ստացված գույքը:

16. «Ե» բաժնում «Ե.1» ենթաբաժինը լրացվում է ուսումնասիրվող ժամանակահատվածում հայտարարատու անձի և նրա ընտանիքի անդամների կողմից կատարված անշարժ գույքի ձեռքբերման կամ օտարման բոլոր գործարքների քանակով՝ նշում կատարելով գործարքի տեսակի վերաբերյալ (ձեռքբերում կամ օտարում): «Ե» բաժնի աղյուսակներում որպես գույքի ձեռքբերման կամ օտարման հիմք նշվում է այն գործարքի տեսակը, որի հիման վրա անձը ձեռք է բերել կամ օտարել է աղյուսակում լրացված գույքը:

17. «Ե.2» ենթաբաժինը լրացվում է ուսումնասիրվող ժամանակահատվածում հայտարարատու անձի և նրա ընտանիքի անդամների կողմից կատարված տրանսպորտի միջոցի ձեռքբերման կամ օտարման բոլոր գործարքների քանակով՝ նշում կատարելով գործարքի տեսակի վերաբերյալ (ձեռքբերում կամ օտարում):

18. «Ե.3» ենթաբաժինը լրացվում է ուսումնասիրվող ժամանակահատվածում հայտարարատու անձի և նրա ընտանիքի անդամների կողմից կատարված արժեթղթերի կամ այլ ներդրումների (բաժնեմաս, փայաբաժին) ձեռքբերման կամ օտարման բոլոր գործարքների քանակով՝ նշում կատարելով գործարքի տեսակի վերաբերյալ (ձեռքբերում կամ օտարում):

19. «Ե.4» ենթաբաժինը լրացվում է ուսումնասիրվող ժամանակահատվածում հայտարարատու անձի և նրա ընտանիքի անդամների կողմից կատարված չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող գույքի ձեռքբերման կամ օտարման բոլոր գործարքների քանակով՝ նշում կատարելով գործարքի տեսակի վերաբերյալ (ձեռքբերում կամ օտարում):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ